ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1, հեռ. +(374 11) 514-240

№ Պ/ 046 29 փետրվարի 2016թ.

Հարգելի Լիանա Դոյդոյան

Ի պատասխան Երևանի քաղաքապետարանին ուղղված Ձեր հարցման տեղեկացնում ենք, որ 2016թ. հունվարի 1-ից մինչ օրս աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունը զանգվածային լրատվամիջոցներից և լրագրողներից էլեկտրոնային փոստի միջոցով ստացել է 64 գրավոր հարցում:

Փետրվարի 29-ի դրությամբ ստացված հարցերից 55 հարցման օրենքով սահմանված ժամկետում տրվել է գրավոր պատասխան, 3 հարցման վերաբերյալ տրվել է բանավոր պարզաբանում: Ստացված հարցերից վեցին դեռևս պատասխան չի տրվել, սակայն դրանց պատասխանները նույնպես կտրամադրվեն օրենքով սահմանված ժամկետում:

Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքէջը այցելուներին հնարավորություն է ընձեռում ուղարկել առցանց դիմումներ և հարցեր հղել տարբեր ստորաբաժանումների, հետևել դրանց ընթացքին և նույն եղանակով ստանալ պատասխան հետևյալ հղումով՝
https://www.yerevan.am/am/one-window/

Վերը նշվածից բացի քաղաքացիներն իրենց հետաքրքրող հարցերը կարող են ուղղել և պատասխաններն ստանալ հետադարձ կապ բաժնի միջոցով հետևյալ հղումով՝

https://www.yerevan.am/am/feedback/

Բացի այդ քաղաքապետարանի պաշտոնական կայքէջը https://www.yerevan.am/am/mail/ հղումով քաղաքացիներին հնարավորություն է ընձեռում իրենց հետաքրքրող հարցերը հղել ինչպես ավագանու խմբակցություններին, հանձնաժողովներին, այնպես էլ անդամներին: Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքէջը «Հաճախ տրվող հարցեր» կամ այլ համապատասխան բաժին դեռևս չունի: Համապատասխան աշխատանքային խումբը ներկայում աշխատում է և մոտ ապագայում քաղաքապետարանի պաշտոնական կայքէջը կունենա նման բաժին: